Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն Մ. Թադևոսյան

թիվ 08. 2022թ, կ. 120(2)

Վանաձորի Ա. Խլղաթյանի անվան ՀՄ. 18 միջնակարգ դպրոցի Աշխատանքային պլան

ՈՒսուցչի օգնական

Աթոյան Արմինե

2022-2023 ուս.տարի

Աշխատանքային պլան

	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ
1	Որպես բազմամասնագիտական խմբի անդամ, մասնակցել դպրոց ընդունվող և դպրոցում սովորող երեխաների կրթական կարիքների գնահատման գործընթացներին՝ ԿԱՊԿՈՒ սովորողների բացահայտման և հետագա գնահատման, վկայագրման և ներառման գործընթացների կազմակերպման նպատակով:	Օգոստոս-սեպտեմբեր
2	Ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ սովորողների փաստաթղթերը, ծանոթանալ կրթական սոցիալ հոգեբանական և առողջական կարիքներին, հետագայում կրթական ծրագրերի ընտրության ժամանակ այդ տվյալների վրա հիմնվելու նպատակով:	Օգոստոս-սեպտեմբեր
3	Համագործակցելով դասղեկի և սոց մանկավարժի հետ՝ որոշել և ապահովել ԿԱՊԿՈՒ սովորողներից յուրաքանչյուրի համար օպտիմալ կրթական պայաններ՝ ելնելով սովորողի կարիքից և անհատական առանձնահատկություններից	Ուստարվա ընթացքում
4	Մասնակցել ԿԱՊԿՈՒ սովորողների՝ ըստ դասարանների բաշխման համաչափության ապահովման գործընթացներին՝ համագործակցելով դասղեկների և ԲՄ թիմի հետ:	Օգոստոս
5	Մասնակցել ԱՈՒՊ կազմման աշխատանքներին՝ ելնելով յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկություններց	Սեպտեմբեր-հոկտեմբեր
6	Ինձ կցված յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ սովորողի համար կազմել և տարվա ընթացքում պարբերաբար թարմացնել փաստաթղթերի փաթեթ, որտեղ ներառված են կարիքի և ընթացիկ գնահատման թերթիկներ, սովորողի տարվող աշխատանքների նմուշներ	Ուստարվա ընթացքում
7	Կազմակերպել անհատական աշխատանքներ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ՝ դասապատրաստում և կրթական ծրագրերով նախատեսված գիտելիքների մշակում և ամրապնդում	Ուստարվա ընթացքում

8	Մասնակցել ԿԱՊԿՈՒ սովորողների հետ դասապրոցեսին՝ ապահովելով սովորողների ներառումն ու աջակցելով պարապող ուսուցիչներին՝ կրթության գործընթացի առավել արդյունավետ կրթական ծրագրերի և չափորոշիչներին համապատասխան կազմարկման և իրականացման գործընթացում:	Ուստարվա ընթացքում
9	Դասերից հետո սովորողների հետ կազմակերպել թղթե պատկերների, կոլաժների և օրիգամիների պատրաստման խմբակ, որը կնպաստի սովորողների մոտ մոտորիկայի զարգացմանը, ուշադրության կենտրոնացման, երևակայության զարգացմանն ու կխթանի տրամաբանական մտածողությունը	Հոկտեմբեր-մայիս
10	Աշուն թեմայով կազմակերպել անհատական աշխատանքների ցուցահանդես՝ կոլաժներ, նկարներ և այլն	Հոկտեմբեր-Նոյեմբեր
11	Կազմակերպել ամանորյա միջոցառում, ներգրավելով ԿԱՊԿՈՒ բոլոր սովորողներին,	Դեկտեմբեր
12	Կազմակերպել մայրերին և զարնանը նվիրված միջոցառում՝ ներառելով ԿԱՊԿՈՒ սովորողներին	Մարտ-ապրիլ
13	Կազմակերպել ներառված սովորողների անհատական աշխատանքների ցուցահանդես՝ ջուր և ծովային թեմաներով:	Ապրիլ-մայիս
14	Կատարել ընթացիկ գնահատումներ՝ կրթության կազմակերպման արդյունավետության բացահայտման նպատակով և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն ձեռքբերումների և դժվարությունների վերաբերյալ ներառական կրթության համակարգողին՝ հետագա աշխատանքների պլանավորման և, անհրաժեշտության դեպքում վերանայման նպատակով:	Հոտկեմբեր Դեկտեմբեր Մարտ Մայիս
15	Մասնակցել մեթոդական միավորումների աշխատանքներին՝ դպրոցում սովորող ներառված և ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքի առավել պարզ ներկայացման և դրանից բխող կրթական ծրագրերի, կրթության գործընթացին պարապող ուսուցիչներին տեղեկատվության և	Ուստարվա ընթացքում

	մեթոդական աջակցության նպատակով:	
16	Համագործակցել ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների հետ՝ դպրոցում տարվող աշխատանքները տնային աշխատանքների հետ համապատասխանեցնելու և առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ինչպես նաև կենցաղում երեխայի առողջական և հոգեբանական խնդիրներին հակասող գործունեությունից խուսափելու նպատակով:	Ուստարվա ընթացքում
17	Ապահովել դպրոցում և դասարանում ԿԱՊԿՈՒ սովորողի կյանքի և առողջության համար ապահով միջավայր և պայմաններ:	Ուստարվա ընթացքում
18	Մասնակցել հաշմանդամության, հոգեբանական և առողջական խնդիրներով երեխաների վերաբերյալ կազմակերպվող վերապատրաստումներին, սեմինարներին և կրթական ծրագրերին, որոնք իրականացվում են տեղական և միջազգային կազմակերպություններիմ,Վանաձորի ՏՄԱԿ, ՏԻՄ կրթության, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից:	Ուստարվա ընթացքում
19	Հետևել ներառական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, օրենսդրական և կրթական, մեթոդական նորամուծություններին և ապահովել դպրոցում կրթության կազմակերպման համապատասխանությանը այդ փոփոխություններին:	Ուստարվա ընթացքում
20	Մեթոդմիավորման ղեկավարների հետ համագործակցելով՝ մշակել ամփոփիչ աշխատանքների և քննական թերթիկների նմուշներ ԿԱՊԿՈՒ սովորողների համար՝ ելնելով ԱՈՒՊ-ից:	Ուստարվա ընթացքում
21	Կատարել ամփոփիչ գնահատում՝ ուսումնական տարվա ընթացքում ներառված սովորողների կրթության կազմակերպման արդյունավետությունը գնահատելու և առաջիկա ուստարվա աշխատանքները պլանավորելու նպատակով	Ուստարվա ընթացքում